ՆՈՐ ԳՐՔԵՐ

«ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1961, տպաքանակը 5000, 798 էջ, գինը 1 ռ. 82 կ.։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի հրատարակած «Սովետահայ գրականության պատմություն» երկհատոր աշխատության այս հատորն ընդգրկում է գրականության զարգացման ընթացքը 1917—1941-թթ. ժամանակաշրջանում, իսկ երկրորդ հատորն ընդգրկելու է 1941 թ. մինչև մեր օրերը։

Ընթերցող հասարակությանն առաջարկվող ներկա հատորը բաղկացած է սովետահայ գրականության առանձին էտապները և տվյալ ժամանակաշրջանի գրական ժանրերի զարգացման պատկերը բնութագրող տեսություններից և առանձին գրողների կյանքին ու գրական ստեղծագործությանը վերաբերող մենագրություններից։

Հատորի հեղինակներն են՝ Ա. Ասատրյանը, Հովհ. Ղազարյանը, Ս. Աղաբաբյանը, Հր. Թամրազյանը, Հ. Սալախյանը և Ս. Մանուկյանը։

ՀՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ.—*«Դերենիկ Դեմիրճյան», Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961, տպաքանակը 2.500, 512 էջ, գինը 1ռ. 22կ.։*

Մենագրությունը նվիրված է ժամանակակից գրականության խոշորագույն վարպետներից մեկի կյանքի և ստեղծագործության ամբողջական ու բազմակողմանի քննությանը։

Մենագրության մեջ հեղինակը քննության է ենթարկել Դ. Դեմիրճյանի նախասովետական շրջանի գրական գործունեությունը, բացահայտել այն նորն ու առանձնահատուկը, որ իր հետ բերել է գրողը՝ պոեզիայի, արձակի և դրամատուրգիայի բնագավառներում։

Մենագրության զգալի մասը նվիրված է Դեմիրճյանի սովետական տարիների ստեղծագործությանը, քննության են ենթարկված «Վարդանանք» վեպը և պատմավեպի տեսության մի շարք խնդիրներ։

Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.—*«Սովետահայ թատրոնի տարեգրություն», Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961, տպաքանակը 1000, 705 էջ, գինը 2 ռ. 25 կ.։*

Գրքում արձանագրված են սովետահայ թատրոնի պատմության 1917—1940 թվականների բոլոր կարևոր իրադարձությունները՝ ժամանակագրական ամփոփ տեղեկություններ թատրոնների խաղացանկի, գաստրոլային ներկայացումների, բեմադրությունների, քննարկումների, գեղարվեստական ասմունքի, թատերական գրականության, դրամատուրգների, ռեժիսյորների, դերասանների, թատերական նկարիչների, դիրիժյորների, բալետմեյստրների և բեմական այլ գործիչների մասին։

Աշխատության մեջ հայկական դրամատիկական և երաժշտական թատրոնների տարեգրությունից բացի տրված է նաև Սովետական Հայաստանում գործող ռուսական, ադրբեջանական և քրդական, ինչպես նաև եղբայրական ռեսպուբլիկաներում գոյություն ունեցող հայ թատրոնների տարեգրությունը։

Տարեգրությանն առընթեր ներկայացված այբբենական ցանկերը, որոնք նվիրված են սովետահայ թատրոնի զանազան հարցերին, մեծ չափով դյուրին են դարձնում աշխատությունից օգտվելը։

ՆՈՐ ԳՐՔԵՐ

Գ. ՀՈՎՆԱՆ.— «Ռուս-Հայ գրական կապերը XIX—XX դարերում», Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961, տպաքանակը 3000, 490 էջ, գինը 98 կ.։

Ներկա հատորը նույնանուն գրքի արդեն լույս տեսած 1-ին մասի օրգանական շարունակությունն է և ընդգրկում է մենագրության հաջորդ՝ 6—9-րդ գլուխները։ Բացի ծավալուն ներածականից, գրքում հատուկ գլուխներ են հատկացված ռուս ռեալիստական գրականության վարպետներ Լև Տոլստոյին, Անտոն Չեխովին և Մաքսիմ Գորկուն։ Հատուկ ուշադրություն է դարձված Յուրի Վեսելովսկու ու Վալերի Բրյուսովի գրական գործունեության և հայ գրականությանը նվիրված նրանց արժեքավոր հրատարակությունների դերին ու նշանակությանը։ Հեղինակն անդրադարձել է Ա. Լունաչարսկու, Ա. Տոլստոյի, Ա. Ֆադեևի և մյուս ականավոր գրողների՝ հայ գրականության ու արվեստի մասին գրած հոդվածներին, ասույթներին, թարգմանություններին։

Հ. Խ. ԽԱԼՓԱԽՉՅԱՆ.— «Հայաստանի արտադրական կառուցվածքները» Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961, տպաքանակը 1000, 91 էջ, գինը 42 կ.։

Ներկա աշխատության մեջ շարադրված են, ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս լայնորեն տարածված արտադրական կառուցվածքների կոմպոզիցիոն ու կառուցողական-տեխնիկական առանձնահատկությունները, նրանց ճարտարապետական ձևերի զարգացման պատմական էտապների ընդհանրությունը։

Շ. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ.— «Հայկական ՍՍՌ մեքենաշինության մասնագիտացումն ու կոոպերացումը» Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961, տպաքանակը 2000, 182 էջ, գինը 48 կ.։

Գրքում քննարկված են հասարակական աշխատանքի բաժանման և արտադրության մասնագիտացման ու կոոպերացման հարցերը։

Հայկական ՍՍՌ մեքենաշինության օրինակով ցույց է տրված մասնագիտացման ու կոոպերացման դերը հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում։

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ.—«Պատմություն Հայոց» «Մատենադարան», 1961, տպաքանակը 5000, 424 էջ, գինը 2 ռ. 80 կ.։

Կիրակոս Գանձակեցու այս գիրքը Հայաստանի, Մերձավոր Արևելքի և մոնղոլների՝ Միջին դարերի պատմության ամենահիմնական սկզբնաղբյուրներից մեկն է։

Գանձակեցու «Պատմության» ներկա գիտական-քննական բնագիրը պատրաստված է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ—«Մատենադարանում»՝ աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի։

Գրքի ընդարձակ առաջաբանում, Կ. Մելիք-Օհանջանյանը հանգամանորեն շարադրել է Կիրակոս Գանձակեցու կյանքն ու գործունեությունը։

«ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ»

ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, գիրք առաջին, 1961, տպաքանակը 5000, 388 էջ, գինը 1 ռ. 05 կ.։

Այս հրատարակությամբ վերսկսվում է դեռևս 1940 թ. Արմֆանի կողմից «Գրական ժառանգության» Ա հատորի լույս ընծայմամբ սկսված աշխատանքը, որի նպատակն է աստիճանաբար հրատարակել ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում ժողովված գրական ժառանգությունը։

«Գրական ժառանգության» այս հատորն ամփոփում է Ալ. Ծատուրյանի և Նար-Դոսի այն նամակները, որոնք պահպանվում են թանգարանում և այլ արխիվներում։

Հատորն ունի ընդարձակ ծանոթագրություններ և անձնանունների բառարան՝ կենսագրական համառոտ տեղեկություններով։